

Պրոֆ. Բերնդ Բրաուն

Հայդելբերգ, 20. նոյեմբերի 2020

Սանդվիինգերտ 39

69123 Հայդելբերգ

Հայկո Մասսին, ԳԲա

Գերմանիայի Բունդեսթագ

Հանրապետության հրապարակ 1

11011 Բեռլին

Դաշնության արտաքին գործերի հարգելի՛ նախարար, թանկագին ընկեր Մասս,
ես կուզենայի իմ զարմանքը, այո՛, ավելին, իմ վրդովմունքն արտահայտել առ այն, որ
գերմանական սոցիալ-դեմոկրատիան լռել է Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի
հարձակողական պատերազմի մասին կամ, ինչպես նաև Դուք եք արտահայտվել
Բունդեսթագում հոկտեմբերի 29-ի Ձեր ելույթում, հավասար հեռավորություն է
պահպանել պատերազմող երկու կողմերի նկատմամբ: Այստեղ SPD-ի համար
առնվազն երեք պատճառ կար միանշանակ Հայաստանի կողքին կանգնելու՝

Առաջին՝ Ադրբեջանի դեպքում հարցը վերաբերում է երկրորդ սերնդի ընտանեկան
տոտալիտար բռնապետության, որտեղ շարունակ ոտնահարվում են մարդու և
փոքրամասնությունների իրավունքները: Դրա համար կարելի է բազմաթիվ
օրինակներ բերել, ինչպես օրենքից դուրս հայտարարված՝ ադրբեջանական ազգային
բանաստեղծ Աքրամ Այլիսլիի ճակատագիրը, որն իր «Քարե երազներ» վեպի համար,
որում նա համարձակվում էր համակրանք արտահայտել հայերի հանդեպ,
ենթարկվել է պետական ծանրագույն ճնշումների, կամ 1990-ական թթ. Նախիջևանի
անկլավում հայկական բոլոր մշակութային արժեքների ավերումները: Հայաստանի
դեպքում, ընդհակառակը, հարցը վերաբերում է, բոլոր դժվարություններով հանդերձ,
ինքն իր հետ մրցող խորհրդարանական ժողովրդավարության:

Երկրորդ՝ SPD-ն 2020 թ. իր լրությամբ շարունակեց իր սեփական կուսակցության պատմության անբարո ավանդույթը, քանի որ սոցիալ-դեմոկրատիան Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նույնպես լռել է հայերի ցեղասպանության մասին՝ մեկ ուշագրավ բացառությամբ. դա Կարլ Լիբկնեխտն էր, որը 1916 թ. հունվարի 11-ին Ռայխստագում բացորոշ խոսեց հայերի բնաջնջման մասին, ինչի համար պլենումի (ըստ երևույթին՝ նաև SPD-ի) քրքիջի ներքո ռայխստագի նախագահը նրան զրկեց խոսքից:

Երրորդ՝ այս հակամարտությունում ագրոսորը, միանշանակ, Ադրբեջանն էր, և այս պատերազմի համար հարձակման հրամանը տրվեց Անկարայում, որն Ադրբեջանին աջակցել է սիրական վարձկաններով: Երբվանի՞ց է SPD-ն համակրում երկրների, որոնք հարձակողական պատերազմներ են վարում: Երբվանի՞ց է SPD-ն համակրում Ադրբեջանի պես պետություններին, որոնք մահապատժի են ենթարկում ռազմագերիներին:

Փաստը, որ Գերմանիան, հետևապես առաջին հերթին դաշնային ղեկավարությունը և նրա սոցիալ-դեմոկրատական հատվածը՝ արտգործնախարարի գլխավորությամբ, որպես Լեոնային Ղարաբաղի համար իրավասու Մինսկի խմբի անդամ, հեռու է պահել իրեն այս հակամարտությունից և այդպիսով հնարավոր դարձրել աշխարհի հնագույն քրիստոնյա երկրի նկատմամբ երկու մուսուլմանական ագրեսորների և բռնապետերի հաղթանակը, դեռ ծանր հետևանքներ կունենա Արևմուտքի համար: Բռնապետերի նկատմամբ հանդարտեցման քաղաքականությունը նրանց չի հանգստացնում, այլ նրանց քաջալերում է հետագա գործողությունների, ինչն այժմ ուղղակիորեն տեսնում ենք Կիպրոսում: Յուրուբ-ի էջերում կարդացե՛ք ջարդված գերմաներենով մեկնաբանությունները, որոնցում հաղորդվում է Լեոնային Ղարաբաղի հակամարտության մասին: Դուք ստիպված կլինեք խիստ սարսափել Գերմանիայի թուրքական համայնքից դուրս եկող՝ ատելությամբ, դաժան բռնությամբ լի՝ այդ հակաքրիստոնեական և հակաարևմտյան հռետորաբանությունից:

Ըստ իս՝ անհրաժեշտ է այժմ պատժամիջոցներ նախաձեռնել Ադրբեջանի դեմ: Եվրոպան պատժամիջոցներ է սահմանում Բելառուսի դեմ և Նավալնիի տհաճ գործից հետո դրանով

սպառնում է նաև Ռուսաստանին: Արդեն Ղրիմի բռնակցումից հետո պատժամիջոցներ սահմանվեցին Մոսկվայի դեմ: Պատերազմում ագրեսոր Ադրբեջանը, ընդհակառակը, պետք է անվնաս ազատվի՞: Կարո՞ղ է այդպիսի երկիրը մնալ Եվրոպայի խորհրդի անդամ: Չպե՞տք է վերջինս գոնե դադարեցնի այդ անդամակցությունը: Չե՞ք տեսնում այն վտանգը, որ պարոն Էրդողանի հանդեպ շարունակական ծնկաչոք խոնարհումը նսեմացնում է նաև Եվրոպայի գաղափարը:

Ես՝ որպես Գերմանիայի քաղաքացի, որպես քրիստոնյա, որպես պատմաբան, որն ինտենսիվորեն զբաղվել է Հայաստանի պատմությամբ և այդ մասին դասընթացներ վարել Հայդելբերգի համալսարանում, և որպես երրորդ սերնդի սոցիալ-դեմոկրատ՝ այս հակամարտության նկատմամբ SPD-ի դիրքը համարում եմ ուղղակի աղետալի: SPD-ն մի նոր ծանր վնաս կպատճառի իր վստահելիությանը, եթե չուղղի իր դիրքորոշումը և միանշանակ չկանգնի Հայաստանի կողքին:

Ջերմ ողջույններով՝

պրոֆ. Բերնդ Բրաուն